ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ (2005 Թ.)

Թուրքիայի իշխանությունների՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կասեցման մարտավարության կարևորագույն բաղկացուցիչը ժխտողականությունն է: Թուրքիան պարբերաբար օգտագործում է միջազգային տարբեր հարթակները և՛ Հայոց ցեղասպանության հերքման, և՛ հակահայ քարոզչություն իրականացնելու համար: Մեծ Եղեռնի 90-րդ հիշատակման տարելիցի հայկական միջոցառումներին հակազդելու համար թուրքական իշխանությունները համակարգեցին իրենց մարտավարական ողջ գործիքակազմը և՛ երկրի ներսում, և՛ միջազգային ասպարեզում՝ ձևավորելով օրենսդրական նախաձեռնություններ և ինստիտուցիոնալ կառույցներ՝ ժխտողական քաղաքանության արշավի համար՝ գործարկելով ինչպես հին, փորձված, այնպես էլ նոր մեթոդներ:

Եվրոպական երկրների դրական արձագանքը նպաստեց Ցեղասպանության ճանաչման գործընթացի ծավալմանը, երբ ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, որպես ռազմավարական հիմնախնդիր, դրվեց Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգում: 2000 թ. նոյեմբերի 7-ի Ֆրանսիայի Սենատի օրիանագիծը և այնուհետև նոյեմբերի 15-ի Եվրախորհրդարանի՝ Թուրքիայի անդամակցության առաջընթացի վերաբերյալ բանաձևը առաջ բերեցին Թուրքիայի կոշտ հակազդեցությունը: Ակնհայտ էր, որ մի շարք պետությունների և միջազգային կառույցների կողմից ընդունված Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման բանաձևերը սպառնում էին թուրքական պետության «հեղինակությանը», ուստի ԱԶԿ-ի իշխանավարման առաջին շրջափուլում Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը դարձավ պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ:

Հայոց ցեղասպանության ժխտողականության գաղափարական հիմքը մշակվում է հիմնականում Թուրքական պատմական ընկերության (ԹՊԸ) կողմից հրատարակվող բազմաթիվ «գիտական» աշխատություններում, շրջանառվում և քննարկվում և՛ ներթուրքական, և՛ միջազգային տարբեր դիսկուրսներում: ԹՊԸ պարբերաբար աշխատանքներ է իրականացնում տարբեր երկրների արխիվներում և, կատարելով «համապատասխան ընտրություն», հրատարակում փաստաթղթերի ժողովածուներ, որտեղ «հիմնավորվում և ապացուցվում է հայերի կողմից թուրքերի ցեղասպանության իրողությունը»: Այդ աշխատությունները թարգմանվում են տարբեր լեզուներով ու առաքվում համապատասխան արևմտյան կառույցներին[1]:

2005 թ. մարտի 1-ից Հանրապետական ժողովրդական կուսակցությունը Թուրքիայի համար օրակարգային խնդիր դարձած «Հայկական հարցին լուծում գտնելու համար» խորհրդարանում քննարկումներ նախաձեռնեց: ՀԺԿ նախագահ Բայքալը հայտարարեց, որ «1915թ. դեպքերի 90-րդ տարելիցին ԱՄՆ-ի և Եվրոպայի հայկական խմբավորումները նոր թափ են հաղորդել Թուրքիայի՝ օսմանյան շրջանում հայերի ցեղասպանության ճանաչման քարոզարշավին: Թուրքիան արդեն հոգնել է այդ խնդրից: Հավատացած ենք, որ այս գործընթացը կարելի է ուղղել հակառակ ուղղությամբ»[2]: ՀԺԿ նախաձեռնությամբ սկսված «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պնդումների շուրջ» քննարկումներն ընթացան տարբեր ձևաչափերով և ընդհատումներով տևեցին շուրջ երկու ամիս: Պետք է նշել, որ դրանք դեռևս ամբողջովին գաղտնազերծված չեն, ելութները ներկայացված են միայն հատվածաբար, սակայն այսքանն իսկ թույլ է տալիս բավարար պատկերացում կազմել բուն գործընթացի վերաբերյալ:

Թուրքիայի ազգային մեծ ժողովի քննարկումները սկսեց ՀԺԿ պատգամավոր Շյուքրյու Էլեքդաղը, ով որոշ ժամանակ պաշտոնավարել է որպես ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան. «Հայաստանի հետ հարաբերություններում որևէ դրական տեղաշարժ ակնկալել պետք չէ, քանի դեռ Երևանը պատրաստ չէ պատմաբանների երկխոսությանը, իսկ հայ պատմաբանները «չեն ցանկանում մաքրել իրենց պատմությունը»: Նա նաև Հա-

[1] Ermeni araştırmalari, http://www.ttk.gov.tr/index.php?Page=Sayfa&No=90

[2] Yetkin Murat, Soykırım" için atak, http://www.radikal.com.tr/yazarlar/murat-yetkin/soykirim-icin-atak-739454

յոց ցեղասպանության ճանաչման դեմ թուրքական քաղաքականությունը ակտիվացնելու կոչ արեց: Ըստ Էլեքդաղի՝ «հայկական պնդումները հիմնված չեն լուրջ փաստաթղթերի վրա»: Նա առաջարկեց հայ և թուրք պատմաբանների խումբ ստեղծել, որը կուսումնասիրի ոչ միայն Թուրքիայի և Հայաստանի, այլև ԱՄՆ, Անգլիայի, Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի արխիվները: Նախկին դիվանագետը թուրքական արխիվներում իր կատարած ուսումնասիրությունների արդյունքում «համոզվել է», որ պատմական իրողությունը այլ է. հայերն են վայրագություններ կատարել թուրքերի նկատմամբ: ՀԺԿ պատգամավորը «հույս հայտնեց» որ իր կուսակցության նախաձեռնությունը կընդլայնի ԱԶԿ գործունեության դաշտը և հնարավորություն կընձեռի հայ-թուրքական հարաբերությունները դուրս բերել «ցեղասպանություն» բառի ստվերից[3]:

ԹԱՄԺ-ում Հայկական հարցի շուրջ քննարկումը շարունակեց Թուրքական պատմական ընկերության նախագահ Յ. Հալաչօղլուն: Թուրքական խորհրդարանի ԵՄ ինտեգրման և արտաքին հարաբերությունների հանձնաժողովների անդամների հետ հանդիպման ժամանակ, որին ներկա էին նաև խորհրդարանի նախագահ Բ. Արընչն ու փոխնախագահ Ի. Ալփթեքինը, Հալաչօղլուն հայտարարեց, թե «ուսումնասիրելով 50 հազար պատմական փաստաթուղթ՝ որևէ տեղ չեն հանդիպել հայերի նկատմամբ ցեղասպանություն իրականացնելու վկայության»: Մանրամասն տվյալներ ներկայացնելով ԹՊԸ կողմից հրատարակված վերջին «Հայեր. աքսոր և գաղթ» աշխատությունից՝ Հալաչօղլուն ևս պատգամավորներից պահանջեց Ցեղասպանության իրողությունը ուսումնասիրող հանձնախումբ նախաձեռնել՝ հավելելով, որ «Օսմանյան կայսրությունում տեղի ունեցածը ծանր գաղթ էր և ոչ ցեղասպանություն»[4]:

Հայոց ցեղասպանության շուրջ հաջորդ քննարկումը թուրքական խորհրդարանում կայացավ Թուրքիայի վարչապետ Էրդողանի և ՀԺԿ նախագահ Բայքալի միջև մարտի 8-ին: Հանդիպումից հետո լրագողներին տրված ասուլիսի ժամանակ ԱԶԿ ղեկավարը մանրամասնեց իր դիրքորոշումը. «Հայերը համոզված չեն ցեղասպանության վերաբերյալ իրենց պնդումներում: Եթե վստահ լինեին, կբացեին արխիվները, ինչպես

[3] Նույն տեղում:

[4] Ermeni soykırımı iddiaları bir kez daha belgelerle yalanlandı, http://www.tbmm.gov.tr/develop/owa/haber_portal.aciklama?p1=18646

մենք... Խեղաթյուրված անցյալի, արյան և ատելության հիման վրա հնարավոր չէ ապագա կառուցել»: Էրդողանը մեկ անգամ ևս շեշտեց պատմաբանների հանձախումբ ստեղծելու անհրաժեշտությունը, որը կհամակարգի և ՅՈՒՆԵՍԿՈ-ի հաստատմանը կներկացնի արխիվների վրա հիմնված ուսումնասիրությունների արդյունքները: ԱԶԿ առաջնորդը վստահություն հայտնեց, որ «Ցեղասպանության միջազգային ճանաչման քարոզարշավը ապարդյուն կլինի, քանի որ հայերի պնդումներն անհիմն են»: Նա միևնույն ժամանակ հավաստիացեց, որ իր կառավարությունն անելու է ամեն հնարավորը այդ քարոզարշավը կասեցնելու համար՝ հայտարարելով՝ «այսօր օրակարգում առավել կարևոր խնդիր չկա»[5]:

Էրդողանը տեղեկացրեց նաև, որ ՀԺԿ նախագահի հետ քննարկել են «այսպես կոչված, Հայոց ցեղասպանության անհիմն պնդումների» դեմ պայքարի գործողությունների նախագիծ, որն արտաքին գործերի նախարարությունում լրամշակվելուց հետո կներկայացվի հանրությանը:

ՀԺԿ առաջնորդ Բայքալը, նշելով, որ վարչապետի հետ որևիցե այլ հարց չեն քննարկել, կարևորեց Հայոց ցեղասպանության պնդումների դեմ պայքարում իշխանությունների և իր կուսակցության համատեղ ու միասնական գործունեությունը՝ հայտարարելով. «Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը միայն քաղաքական դրդապատճառներ ունի, այն բացառապես հայկական լոբիստական կազմակերպությունների աշխատանքի արդյունք է՝ զուրկ որևէ գիտական հիմնավորումից»: Բայքալը ևս անդրադարձավ հայկական արխիվներին. «Բացե՛ք արխիվները, տեսնենք՝ ինչ կա: Մենք ցանկանում ենք այս հարցի իսկության ճշմարտությունը ցույց տալ ամբողջ աշխարհին»[6]:

Փաստորեն Հայկական հարցը անվերապահորեն միավորեց քաղաքական անհաշտ ախոյաններին. ՀԺԿ-ն միակ ընդդիմադիր ուժն էր, որ չէր ընդունում և մշտապես կոշտ քննադատության էր ենթարկում վարչապետ Էրդողանի կառավարության և՛ արտաքին քաղաքականությունը, ընդ որում բոլոր ուղղություններում, և՛ ներքաղաքական սոցիալ-տնտեսա-

[5] Başbakan Erdoğan ermeni soykırımı iddiaları konusund CHP ile ortakbir tavir bensimsediklerini bildirdi, http://www.tbmm.gov.tr/develop/owa/haber_portal.aciklama?p1=19064

[6] Նույն տեղում:

կան բոլոր նախագծերը, մասնավորապես քրդական նախաձեռնությունները:

Թուրքիայի ազգային մեծ ժողովում Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի ուղիների շուրջ քննարկումները շարունակեց հատուկ հրավիրված ամերիկացի պատմաբան Ջասթին Մաքքարթին, ով հայտնի է իր հակահայկական դիրքորոշմամբ և Հայոց ցեղասպանության ժխտման իր տեսություններով: Քննարկումը, որին ներկա էին նաև արտաքին գործերի նախարար Ա. Գյուլը, փոխվարչապետ Մ. Ալի Շահինը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, բացեց խորհրդարանի նախագահ Բ. Արընչը, ով պարզաբանեց «Հայկական հարցի ճշմարտությունը»՝ հայտարարելով. «Թուրքիան իր պատմության որևէ շրջանում ցեղասպանություն չի իրականացրել»[7]:

Արընչը շեշտադրեց Հայկական սփյուռքի գործունեության դեմ պայքարի անհրաժեշտությունը՝ ներկայացնելով որոշ երկրների խորհրդարաններում և միջազգային կառույցներում իրենց արձանագրած հաջողությունները:

Այս քննարկմանը հերթական անգամ ելույթ ունեցավ նաև ՀԺԿ առաջնորդը: Չնայած նրա ելույթը, ինչպես և խորհրդարանի նախագահինը, ներկայացված է հատվածաբար, այնուամենայնիվ այստեղ բավականին կոշտ շեշտադրումներ կան. «Եթե Հայաստանը ցանկանում է Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ ձևավորել և զարգացնել համագործակցությունը, ապա պետք է ընդունի մեր առաջարկը ընդհանուր պատմությունը վերագնահատելու վերաբերյալ»[8]:

Պետք է նշել, որ իր նախաձեռնությամբ կազմակերպված խորհրդարանական այս քննարկումներում ՀԺԿ առաջնորդը և պատգամավորները բավականին ակտիվ մասնակցություն են ունեցել և հանդես եկել ակնհայտ հակահայ, նույնիսկ թշնամական ելույթներով և ճառերով:

Ինչ վերաբերում է Ջ. Մաքքարթիի ելույթին, ապա «պատմության ռահվիրայի»՝ «Հայկական հարցի իսկության» վերաբերյալ մեկնությունները դեռևս գաղտնազերծված չեն:

Քննարկումների հաջորդ փուլը թուրքական խորհրդարանի ԵՄ ինտեգրման և Արտաքին հարաբերությունների հանձնաժողովների անդամների և «ծագումով հայ» գրող-

---

[7] J. McCarthy, "Ermeni sorununun gerçeği" ni anlatti http://www.tbmm.gov.tr /develop/owa/haber_portal.aciklama?p1=20182

[8] Նույն տեղում:

լրագրողների[9] ու Հայկական հարցի փորձագետ, նախկին դեսպանների միջև էր: Այս հանդիպման մանրամասները հայտնի չեն, բացառությամբ ԵՄ ինտեգրման հանձաժողովի նախագահ Ա. Ռ. Ալաբոյունի ելույթից, ով ակնարկել է, թե հայ լրագրողները, որոնք «սիրված են Թուրքիայում, ունեն անկախ քաղաքական հայացքներ, խոսքի ազատություն և ներքաշված չեն ցեղասպանության քարոզարշավում», կարող են կարևոր դերակատարում ունենալ «հայ-թուրքական քաղաքակիրթ երկխոսության ծավալման գործընթացում»[10]:

Հայազգի լրագրողներին հրավիրելով խորհրդարանական քննարկումներին՝ ԱԶԿ ղեկավարությունը փորձեց հերթական անգամ տարանջատել, տարբերակել հայությանը՝ իր համար «ընդունելի և թիրախային» հատվածների:

Այս միտումը ընդգծվեց նաև արտաքին գործերի նախարար Ա. Գյուլի ելույթում, որը, թերևս, այս խորհրդարանական լսումների հանգուցալուծումն էր: Գյուլն իր ելույթը սկսեց՝ «պարզաբանելով», թե «հայ ասելով՝ բոլորովին նկատի չունի իր երկրի ծագումով հայ քաղաքացիներին, ովքեր ութ դար շարունակ իրենց ներդրումն են ունեցել ընդհանուր արվեստի, գիտության, առևտրի և այլ բնագավառների զարգացման գործում»: Թուրքիայի գլխավոր դիվանագետը պատմական ակնարկ կատարեց՝ ներկայացնելով, թե 11-րդ դարից մինչև 19-րդ դարի վերջերը ինչպիսի սիրով և փոխադարձ վստահությամբ և խաղաղությամբ են ապրել երկու ժողովուրդները: Նա անդրադարձավ Օսմանյան կայսրության շրջանում հայերի սոցիալ-քաղաքական «հատուկ» կարգավիճակին, հայ ազգային կուսակցությունների, կոմիտեների գործունեությանը և Առաջին աշխարհարմարտից առաջ տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումներին: Նա նաև ընդգծեց, թե ինչպիսի ճգնաժամում էր հայտնվել կայսրությունը Ռուսաստանի զավթողական պատերազմների և Արևմտյան տերությունների քաղաքական խաղերի հետևանքով: Հայ կամավորական զորագնդերը Ռուսական կայսրության Արևելյան Անատոլիա ներխուժման ժամանակ, Գյուլի ներկա-

[9] Հանդիպմանը մասնակցում էին թուրքական "*Zaman*" թերթի լրագրող Էթյեն Մահչուպյանը, «Ակօս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը և գրող Լևոն Դեբեղյանը: Ներկա էր նաև արդեն լուծարված Հայ-թուրքական հաշտեցման հանձաժողովի անդամ Գյունդյուզ Աքթանը:

[10] Uyum komisyonu başkanvekili Alaboyun: "90 yillik Ermeni sorununun çözümüne 15-20 yillik bir süreçte ulaşilabilir", http://www.tbmm.gov.tr /develop/owa/haber_portal.aciklama?p1=21043

յացմամբ, այդ «պատրվակով» անպաշտպան կանանց ու երեխաների իսկական սպանդ են իրականացրել, որը հետագայում արդեն ֆրանսիացիների աջակցությամբ տևել է մինչև 1921թ.: Հայերի կողմից կազմակերպված կոտորածներին որոշ վայրերում թուրք ազգաբնակչությունը փորձել է դիմակայել, ինչն արդեն վեր է ածվել զինված բախումների՝ երկուստեք զգալի մարդկային կորուստներ պատճառելով: Հայոց պատրիարքարանին, պատգամավորներին և այլ հայ առաջնորդներին ուղղված օսմանյան կառավարության հորդորները՝ կանխել հայերի կողմից մուսուլմանների ջարդերը, մնացել են անարդյունք, և 1915 թ. ապրիլի 24-ին կառավարությունը «հարկադրված» փակել է Հայկական խորհուրդները և ձերբակալել 235 անդամների՝ հակապետական գործունեության մեղադրանքով: «Ահա այս օրն է ամեն տարի նշվում հայերի կողմից որպես, այսպես կոչված, ցեղասպանության տարելիցի օր. ապրիլի 24-ը, այսինքն՝ Հայկական խորհուրդների փակման և դրանց անդամների՝ այդ ժամանակների ահաբեկիչների ձերբակալման օրը»[11]:

Շարունակելով պատմության խեղաթյուրմամբ հագեցած իր ելույթը՝ նախարարը հիշատակեց 1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի «Ցեղասպանություն հանցագործության կանխման և պատժման կոնվենցիան»՝ հայտարարելով, որ 1915թ. իրադարձությունները բացարձակապես չեն համապատասխանում այս դրույթներին:

Այնուհետև Գյուլն անդրադարձավ «հայ ահաբեկչական» խմբավորումների, մասնավորապես ԱՍԱԼԱ-ի գործողություններին, որոնք միտված էին «այսպես կոչված, Հայոց ցեղասպանության» վրա միջազգային հանրության ուշադրությունը գրավելուն:

Խորհրդարանում Գյուլի ելույթի թիրախը, թերևս, հայկական սփյուռքն էր՝ իր հասարակական, քաղաքական, մշակութային և գիտական կառույցների գործունեությամբ, որոնք էապես ազդում են միջազգային հասարակական կարծիքի ձևավորման վրա և վտանգում Թուրքիայի հեղինակությանը: Այդ շրջանում տարբեր երկրների խորհրդարանների և այլ միջազգային կառույցների կողմից Հայոց ցեղասպանության ճա-

[11] Gül Abdullah, Ermeni iddiaları konusunda TBMM'de Genel görüşme açılmasına ilişkin önergenin görüşülmesi vesilesiyle yapilan konuşma, 16. 04. 2005, ss.629-640v, Yeni Yüzyılda Türk Diş Politikasinin Ufuklari, http://www.mfa.gov.tr/data/BAKANLIK/BAKANLAR/AbdullahGul_kitap.pdf

նաչման վերաբերյալ ընդունված բանաձևերը և որոշումները նախարարը սփյուռքահայ կազմակերպությունների հետևողական լոբիստական աշխատանքի արդյունք համարեց:

Թուրք դիվանագետն ընդգծեց այն «բարյացկամ» վերաբերմունքը, որ Թուրքիան ցուցաբերել է Հայաստանի նկատմամբ՝ անկախացումից ի վեր, նույնիսկ «եղբայր Ադրբեջանի տարածքների 20 տոկոսը զավթելուց հետո էլ, Սև ծովի ցամաքային սահման չունենալու պայմաններում հրավիրելով ՍԾՏՀ և Ստամբուլում Հայաստանի ներկայացուցչություն բացելով»:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի ձախողման ողջ պատասխանատվությունը բարդելով Հայաստանի Հանրապետության և սփյուռքահայ կառույցների վրա, քանի որ «չեն հարգում հարևանների տարածքային ամբողջականությունը և չեն հրաժարվում «այսպես կոչված Ցեղասպության» անհիմն պնդումներից»՝ նախարար Գյուլը ներկայացրեց Թուրքիայի «բարի կամքի դրսևորման» վերջին փորձը՝ վարչապետ Էրդողանի նամակը ՀՀ նախագահին՝ պատմությունը վերագնահատելու և վերահմաստավորելու առաջարկով[12]:

Խորհրդարանական այս քննարկումները գնահատելով չափազանց կարևոր և ժամանակին՝ Գյուլը հայտարարեց, որ «Թուրքիան պատրաստ է դիմակայել մարտահրավերներին, քանի որ չի ամաչում իր պատմության ոչ մի շրջանից և վճռական է պայքարել մինչև վերջ»[13]:

Թուրքիայի նախկին գլխավոր դիվանագետի՝ Հայոց ցեղասպանության և սեփական պատմության նման մեկնությունը մեկ անգամ ևս հաստատում է, որ Արդարություն և զարգացում կուսակցության քաղաքական վերնախավը Հայաստանի հետ հարաբերությունների ձևավորման որևէ իրատեսական քայլ չէր ձեռնարկելու, քանի դեռ Հայաստանի Հանրապետությունը և սփյուռքահայ կառույցները չեն հրաժարվել «այսպես կոչված, ցեղասպանության անհիմն պնդումներից և միջազգային ճանաչման գործընթացից»:

---

[12] ԱԶԿ առաջնորդի նամակը նախագահ Քոչարյանին, ի թիվս Հայկական հարցի դեմ պայքարի այլ գործողությունների, ծրագրվել էր, փաստորեն, այս խորհրդարանական քննարկումների շրջանակներում՝ Էրդողան-Բայքալ հանդիպման ժամանակ: Ուշագրավ է սակայն, որ այն ՀՀ նախագահին հասնելուց առաջ արդեն լայնորեն քննարկվում էր Թուրքիայի քաղաքական վերնախավում և զանգվածային լրատվամիջոցներում:

[13] Gül A., նշվ. Աշխ:

Այս խորհրդարանական քննարկումների արդյունքում Հայոց ցեղասպանության հերքման քարոզարշավում Անկարայի մշտական «զենքերից» դարձավ երկու երկրների պատմաբանների համատեղ հանձնախմբի ստեղծման առաջարկությունը, որը պետք է ուսումնասիրի Հայոց ցեղասպանության եղելության պատմական իրողությունը: Այսպիսի հանձնախմբի ստեղծումը հնարավորություն կտար Թուրքիային գոնե միառժամանակ կասեցնել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը: Հայկական կողմի համար երկխոսության այսպիսի ձևաչափը բոլորովին անընդունելի է, քանզի նշանակում է քննարկել և կասկածի տակ դնել Ցեղասպանության իրողությունը:

Պատմաբանների հանձնախմբի ստեղծման առաջարկ կար նաև Հայոց Մեծ Եղեռնի 90-րդ տարելիցին ընդառաջ՝ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին ուղղված նամակում, որում նա առաջարկում է «պատմաբաններից և այլ փորձագետներից կազմված մի խումբ ստեղծել, որը 1915 թ. դեպքերն ու զարգացումները կուսումնասիրի ոչ միայն Հայաստանի և Թուրքիայի, այլև երրորդ երկրների արխիվներում և ուսումնասիրությունների արդյունքների մասին կտեղեկացնի միջազգային հանրությանը»[14]:

ՀՀ նախագահի դիրքորոշումը պատասխան նամակում հստակ է. «երկկողմ հարաբերությունների զարգացման պատասխանատվությունը կրում են կառավարությունները, և մենք իրավասու չենք այն պատվիրակել պատմաբաններին»[15]: Հայոց ցեղասպանությունը անվիճարկելի իրողություն է՝ քանիցս գիտականորեն ապացուցված, և խնդիրն արդեն գտնվում է քաղաքական հարթության վրա:

Ուշագրավ է այն փաստը, որ Թուրքիայի վարչապետը նամակը հղեց ապրիլին՝ Հայոց Ցեղասպանության 90-րդ տարելիցի հիշատակության նախօրեին: Այս մարտավարությունը՝ փորձել ընթացիկ իրավիճակներից ստանալ առավելագույնը, նպատակ էր հետապնդում շեղել միջազգային հանրության ուշադրությունը Ցեղասպանության 90-րդ տարելիցի միջոցա-

---

[14] Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, Խորհրդարանական լսումներ 19-20-ը դեկտեմբերի, 2007 թ., Երևան 2011, էջ 414:

[15] Նույն տեղում, էջ 415:

ռումներից և ցույց տալ, որ թուրքական կողմն առաջինն է քայլ անում հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Դա Անկարային որոշակիորեն հաջողվեց, ինչի մասին վկայում էին եվրոպացի մի շարք քաղաքական գործիչների, մասնավորապես՝ Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերի ու Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դևիսի, դրական գնահատականները[16]:

Հայաստանի Հանրապետության նախկին արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը Թուրքիայի վարչապետ Էրդողանի նամակը «քարոզչական խաղ» որակեց՝ հայտարարելով. «Թուրքիայից դուրս Ցեղասպանության ճանաչման խնդիրը ոչ ոք պատմական հարթությունում չի դիտարկում: Պատմաբանների և ցեղասպանագետների համար սա փակված խնդիր է»[17]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանության հիշատակման 90-րդ տարելիցին ընդառաջ Թուրքիայի իշխանությունները և քաղաքական ու գիտական վերնախավը նախաձեռնեցին և հետևողականորեն իրականացրեցին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման դեմ պայքարին ուղղված քարոզչական, դիվանագիտական, քաղաքական, գիտահասարակական բազմաշերտ աշխատանքներ, որոնք այնուամենայնիվ մարտահրավերներ են և՛ Հայաստանի Հանրապետության, և՛ Սփյուռքի համապատասխան կառույցներին՝ դիվանագիտական, լոբիստական, գիտահետազոտական, միջազգային- իրավական, քանզի որոշ կերպափոխումներով, բայց հիմնականում նույն նպատակաուղղվածությամբ թուրքական ժխտողական քարոզչամեքենան շարունակում է գործել առ այսօր:

---

[16] Schroder, Almanya'nın konumunu değiştirdi, http://www.mehmetalibirand.com.tr/yazidetay.asp?id=3418

[17] Վ. Օսկանյանի ելույթը, Հայ-թուրքական հարաբերություններ. Հիմնախնդիրներ և հեռանկարներ, Խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի, 2007 թ., Երևան 2011, էջ 20: